եւ հարաւային բազմաթիւ բովերի ընդարձակ խորշերը, հալոցներից դուրս թափուած մոխրակոյտերը, քառասուն կիլոմետր երկարութեան վերայ քառասունից շատ ամրոցների եւ բերդերի, հարիւրաւոր դղեակների եւ գեղերի հետքերը ցոյց են տալիս, թէ որքա՞ն չէն, ճոխ եւ առաջադիմած է եղել երկիրը: Այսօր աւեր Սպերի ձորը հարիւր երեսունի չափ գեղեր ունի, 1536ին Սպերում եղել են չորս-հինգ (4—5) անգամ աւելի, իսկ Պարթեւ-Արշակունիների իշխանութեան ժամանակ՝ տասն անգամ աւելի: Թէեւ այսօր Հայերից իսպառ անջատուած է Սպերի գաւառը, բայց իւրաքանչիւր թրքացած հայ ծերուկ անցորդին կարող է ցոյց տալ իր գեղի-հանդերի, ձորերի, ապառաժների մէջ եղած հին գիւղերի, վանքերի, եայլաների, դղեակների տեղերն ու անունները, որոնց (այս անունների) միայն ժողովածուն կարող է ահագին անցքերի պատմութեան աղբիւր ծառայել:

Սպերից (աւան) արեւելք Ճորոխ գետին միանում են ձախից հիւսիսից հարաւ եղած Վ. եւ Ս. Դարբէնք[1], Ճենքար[2], Տոկուր,

---

1 Դարբէնքը երկու գեղ է, վերին եւ ստորին, որոնք գտնւում են Սոգոռնի լը-ի ստորոտում, ուր գտնւում են երկաթի բովեր: Պէտք է ենթադրել, որ այդ բովերից դուրս բերուած երկաթը նախնական ձեւով այդ տեղ շինցրել եւ գործադրել են: Նկատելի է նոյնպէս, որ հանքերի շուրջը կուսական խիտ անտառները խիստ նօսրացած են եւ շարաչար շահագործուած:

2 Ճենքարը-Ջանքար, Ջենիքար եւս կոչւում է այս